

ՀՈԴԱԿԱՊՈՎ ԿՐԿՆԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայոց լեզվի բառապաշարի ընդհանուր կազմում զգալի տեղ են բռնում նույն բառի կամ արմատի կրկնությամբ կազմված բարդությունները, որոնք այլ բարդությունների պես սկիզբ են առել հեռավոր ժամանակներում և այսօր էլ շարունակում են գոյատևել: Այդպիսի բարդություններն ընդհանուր առմամբ կոչվում են կրկնավորներ (повторы, անգլ. reduplication, ֆր. redoublement, գերմ. Verdoppelung, Reduplikation)¹, որոնց կազմության էլ մասնակցում են տարբեր խոսքի մասերի պատկանող տարբեր բառեր, արմատներ կամ հիմնական ձևեր, ինչպես օրինակ՝ լավ-լավ, սիրուն-սիրուն, խումբ-խումբ, տեսակ-տեսակ, մեկ-մեկ, երկու-երկու, ինչ-ինչ, ֆանի-ֆանի, առանձին-առանձին, ուշ-ուշ, վայ-վույ..., բան-ման, մանր-մունր, առո՛ւ-փառո՛ւ, ավալ-քավալ, կաս-կարմիր, վաշ-վիշ.... Ժամանակ առ ժամանակ, ֆայլ առ ֆայլ, մեկ առ մեկ..., ավելի ու ավելի, շատ ու շատ, հազար ու հազար, վեր ու վեր..., մեկնումեկը, լիովի, այլեայլ, հեղեղ, մերթնդմերթ, շուտումուտ..., դողդողալ, շարշարանք, վազվզոց, խշխշալ, հայհոյել, թափափուկ, խնդմնդալ..., զանազան, մեծամեծ, նորանոր, շարաշար և այլն, և այլն:

Բերված այս օրինակներն էլ շատ պարզ ցույց են տալիս, որ զանազան բառերի կամ արմատների (հիմնական ձևերի) կրկնությամբ կազմվելով, կրկնավոր բարդությունները ամենևին միատեսակ կամ միօրինակ պատկեր չեն ներկայացնում և արտահայտության իրենց տարբեր ձևերն ու եղանակներն ունեն²:

Կան կրկնավոր բարդություններ, որոնք կազմվում են կրկնվող բառի ուղղակի հարադրությամբ, չենթարկվելով հնչյունափոխության կամ մի շարք դեպքերում ենթարկվելով հնչյունափոխության, ինչպես՝ կապույտ-կապույտ, մեծ-մեծ, երամ-երամ, ինչֆան-ինչֆան, կամաց-կամաց, շուտ-շուտ, երեք-երեք, ետ-ետ, ախ-ախ... և՛ մարդ-մուրդ, աման-չաման, դատարկ-մատուրկ, հարալ-հուրալ, արան-տարան, միս-մենակ, լեփ-լեցուն, պարապ-սարապ, աղջիկ-մաղջիկ, սպառ-սպառ և այլն:

Սրանք կրկնավոր բարդությունների ամենապարզ ու շատ սովորական տեսակն են և կրկնվող բառերի շարքի ուղղակի հարադրությամբ կազմվելով՝ կոչվում են հարադրական կրկնավոր բարդություններ: Այս կարգի բարդություններին անմիջապես առնչվում և, անշուշտ, նրանց մի այլ արտահայտությունն են հանդիսանում այն կրկնավոր բարդությունները, որոնց բաղադրիչներն իրար հետ կապվում են գրաբարյան որևէ նախդրով, ինչպես՝ ժամանակ առ ժամանակ, շիթ առ շիթ, տող առ տող, խումբ առ խումբ, կաթիլ առ կաթիլ, մերթ ընդ մերթ, մեջ ընդ մեջ, հե ի հե և այլն³:

Հարադրավոր կրկնավորներ են նաև այն բարդությունները, որոնց բաղադրիչներն իրար հետ կապվում-միահյուսվում են ու (երբեմն՝ և) համադա-

1 Տե՛ս Օ. Ս. Ахманова. Словарь лингвистических терминов. М., 1969, с. 327.

2 Կրկնավոր բարդությունների մասին առանձնապես տե՛ս Մ. Աբեղյան. Հայոց լեզվի տեսություն. Երևան, 1965, էջ 180—184:

3 Հարկ է նշել, որ հայոց լեզվի ինչպես հարադրական (վերլուծական), այնպես էլ համադրական կրկնավոր բարդությունները դժբախտաբար դեռևս հանգամանալից ու ամբողջական ուսումնասիրության նյութ չեն դարձել:

սական շաղկապով: Դրանք էլ, որ հանդես են գալիս նույնպես երկու՝ անհնչյունափոխ, ինչպես՝ շատ ու շատ, ավելի ու ավելի, նորից և նորից, նորից ու նորից, հիմակ ու հիմակ..., և հնչյունափոխված, ինչպես՝ ձիգ ու միգ, ծուռ ու մուռ, բան ու ման, վալ ու վույ..., ձևերով, կոչվում են բաղնիուսական կրկնավոր բաղնիություններ⁴ և, իբրև այդպիսիք, իրենց հերթին համապատասխան շափով համալրում-հարստացնում են հարադրական կրկնավոր բաղնիությունների ընդհանուր կազմը, մեծացնում նրանց իմաստային-իմաստաբանական, ոճական-ուճարանական, հուզական-արտահայտչական արժեքն ու նշանակությունը...

Հայոց լեզուն բավականաչափ հարուստ է հարադրական կրկնավոր բաղնիություններով, որոնց բաղադրիչները թեև մի միություն են կազմում և բառային մի ընդհանուր նշանակություն արտահայտում, բայց միաժամանակ նրանց մեջ պահում են իրենց առանձնակի իմաստը, իրենց առանձին բառային շեշտը և գրավոր խոսքում, իբրև կանոն, գործածվում անջատաբար: Ըստ որում նրանք երբեք շեշտային հնչյունափոխության չեն ենթարկվում և կիրառվելով տարանջատ բաղադրիչներով, բնականաբար, զուտ հարադրական կամ վերլուծական (аналитические, несинтетические) բաղնիություններ են հանդիսանում:

Բայց, ինչպես դարձյալ բերված օրինակներն են ցույց տալիս, հայերենում կրկնավոր բաղնիություններ են կազմվում նույն բառի կամ արմատի ոչ միայն հարադրման, այլև համադրման կամ միացման եղանակով: Այդ հիմունքով կազմված բաղնիությունները, ի տարբերություն համադրական կրկնավորների, կոչվում են համադրական (сυνтетические) կրկնավոր բաղնիություններ, որոնք նույնպես ոչ թե ճիշտ միատեսակ են ու միանման, այլ իրենց հերթին իրենց ներսում տարբերակվում են, բաժանվելով երկու խմբի: Մի առանձին խումբ են կազմում այն կրկնավորները, որոնք առաջ են եկել կամ ստեղծվել կրկնվող բառերի կամ արմատների կցումով, ինչպես օրինակ՝ պեսպես (<պես+պես>), տերտեր (<տեր+տեր>), այլևայլ (<այլ+և+այլ>), լիուլի (<լի+ու+լի>), ծուռուծուռ (<ծուռ+ու+մուռ>), դողդողալ (<դող+դող+ալ>), գոռգոռոց (<գոռ+գոռ+ոց>), փալփալ (<փալ+փալ+ել>), վազվզել (<վազ+վազ+ել>), երեւուն (<եր+եր+ուն>), գուրգուրանք (<գուր+գուր+անք>), հալհոլել (<հալ+հոլ+ել>), խազմզել (<խազ+մազ+ել>), վշվշալ (<վշ+վշ+ալ>)..., այլև՝ կսկիծ (<կիծ+կիծ>), գրգիռ (<գիռ+գիռ>), կասկած (<կարծ+կարծ>), բարբառ (<բառ+բառ>), կակազ (<կազ+կազ>), փափափալ (<փափ+փափ+ել>) և այլն⁵:

Սրանք էլ, ստեղծվելով կրկնվող բառերի կցումով կամ պարզապես արմատների կրկնությամբ, կոչվում են կցական (соединительные) կրկնավոր բաղնիություններ և կազմավորման իրենց տարաստիճանավորումներով, բաղադրիչների իմաստային ոչ միանման կապերով ու հարաբերություններով, հնչյունափոխական զանազան դրսևորումներով յուրահատուկ ու ծանրակշիռ տեղ են բռնում հայերենի կցական բաղնիությունների մեջ ընդհանրապես:

Քանակական ու որակական մեծ կշիռ ունեցող այդպիսի կրկնավորներից բացի հայերենում համադրական կրկնավորների մի այլ խումբ էլ կազմում են այն բաղնիությունները, որոնց բաղադրիչները իրար հետ կապվում-միանում են ա հոդակապով, ինչպես՝ զանազան, մեծամեծ, շառաշառ, ջերմաջերմ, դեզադեզ, գունդազունդ, նորանոր, կուրակուր և այլն:

Նկատել և սրանց գոյությունը հայ լեզվաբանական գրականության մեջ առաջինը արձանագրել է Մ. Աբեղյանը նախ՝ փոփոխությամբ կրկնավորների

⁴ Այդ մասին տե՛ս մեր «Բաղնիական բաղնիությունների իմաստաբանական կառուցվածքը» հոդվածը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1983, № 6, էջ 15):

⁵ Այդ նախադրյալով առաջ եկած մի շարք կրկնավորներ հնչյունական փոփոխություններ կրելով՝ վերածվել են քարացած բաղնիությունների և այսօրվա լեզվական զգացողությամբ առաջ իբրև պարզ բառեր են ըմբռնվում (այդ մասին տե՛ս, օրինակ, մեր «Բառաքնություն» հոդվածը, «Բանբեր երեանի համալսարանի», 1981, № 1):

և ապա՝ կցական բարդությունների առիթով ասելով. «Այս փոփոխությունը լինում է երբեմն և իսկական բարդ բառերի մեջ (ընդգծումն իմն է—Ա. Մ.), ինչպես՝ ժանտաժուտ, բարձրաբերձ, հաստամեստ»⁶. «Գրաբարից ունիւք կրկնավորներ նաև իսկական բարդության ձևով (ընդգծումն իմն է—Ա. Մ.), ինչպես՝ գունդագունդ, դէզադէզ (առանց Ո՛ր, է՛ ձայնավորների փոփոխության), շեղշաշեղջ, կերպակերպ, զանազան, մեծամեծ, ջերմաջերմ, նորանոր, շարաշար, աղջամուղջ, ժանտաժուտ, արհամարհել, խառնամառն, հաստամեստ, խաժամուժ»⁷:

Այստեղից պարզ երևում է, որ Մ. Աբեղյանը կրկնավոր բարդությունների տարբեր տեսակների միջև սոսկ համեմատություն է անցկացրել և ա հոդակապով կրկնավորները ո՛չ թե հարադրական կամ կցական, այլ բացառապես իսկական բարդություններ՝ իսկական բարդ բառեր է համարել: Եվ դա միանգամայն ճիշտ ու ընդունելի տեսակետ է, որը և անտեսելով կամ որին հակառակ գնալով՝ ոմանք գտնում են, թե իբր հին հայերենից ժամանակակից հայերենի ժառանգած անվանական կրկնավորները «թեև ձևով նման են իսկական բարդություններին (ունեն ա հոդակապ), սակայն ըստ էության կցական բարդություններ են (ընդգծումն իմն է—Ա. Մ.), ինչպես՝ գունդագունդ, դեզադէզ, բարձրաբերձ, խորախոր, ժանտաժուտ, ծանրածանր, հաստամեստ, մալմալ, մեծամեծ, նորանոր, շարաշար, ջերմաջերմ և այլն»⁸:

Այնինչ իրականում հոդակապով կրկնավորները ո՛չ թե կցական, այլ իրենց թե՛ ձևաբանական ու իմաստաբանական կառուցվածքով, թե՛ բնույթով ու էությունամբ համադրական իսկական բարդություններ են և բնավ չեն տարբերվում ա հոդակապով կազմված այլ կարգի բարդ բառերից:

Զպետք է մոռանալ, որ ա հոդակապը զորավոր ու լայն գործածություն ունեցող մի այնպիսի բառակազմական միավոր է, որով բոլոր դեպքերում ու անխտիր այնպիսի բարդություններ են կազմվում, որոնց բաղադրիչները սերտ ու «անբախտելի» կապով են կապվում իրար հետ և, ինչպես ընդունված է այլաբանորեն ասել, ոչ թե ֆիզիկական, այլ քիմիական միացություններ են կազմում⁹: Ուրեմն՝ ինչպես մյուս բոլոր՝ հոդակապով ու անհոդակապ իսկական բարդությունների, այնպես էլ ա հոդակապով կրկնավորների տարրալուծման դեպքում բարդությունը քանդվում ու զրկվում է իր բաղադրիչների արտահայտած միասնական կամ ընդհանուր նշանակությունից, համա- օրինակ, մեծամեծ և մեծ ա մեծ, դեզադէզ և դեզ ա դեզ, ծանրածանր և ծանր ա ծանր, սրասուր և սր ա սուր և այլն:

Մինչդեռ կցական կրկնավոր բարդությունները, հակառակ դրանց, հեշտորեն տարրալուծվում, կցականությունից հարադրության են վերածվում, հավասարապես արտահայտելով նույն նշանակությունը, համա- օրինակ, պեսպես («Մին՝ ոռնում է զերթ գազան, Մին՝ վայրենի սուլում պեսպես», Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 379)—պեսպես («Անցե՛լ են, օնց որ ծաղկունքը պեսպես, Որ անցած գարնան կային ձեր լանջում», Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 49). հե ի հե («Կամ հետևում հե ի հե թիթեռնիկին ոսկեթև», նույն տեղում, էջ 4)—հեիհե («Բերանն է հասել—թռչում է հոգին, Աչքերը մթնում, շրնշում հեիհե», Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 300). դեմուդեմ («Իմ հոր սըրահի շեմքի դեմուդեմ նստոտած խոհուն ու խոժոռադեմ», Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 185)—դեմ ու դեմ («Ու նըստոտեցինք իրար դեմ ու դեմ», նույն տեղում, էջ 36) և այլն:

Հոդակապով կրկնավորները կցական կրկնավոր բարդություններից և դրանց մեջ նաև համանման բառերի կրկնավորներից տարբերվում են և նրա-

6 Մ. Աբեղյան. Աշխարհարարի քերականություն. ԼՂԺԻԿ, 1906, էջ 87:

7 Մ. Աբեղյան. Հայոց լեզվի տեսություն. էջ 183:

8 Վ. Գ. Առաքելյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան. Ժամանակակից հայոց լեզու. հ. 1, Երևան, 1979, էջ 293, 294:

9 Գ. Սևակ. Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց. Երևան, 1955, էջ 156:

նով, որ ենթարկվում կամ կարող են ենթարկվել շեշտային հնչյունափոխության, ինչպես՝ մաքրամաքուր (<մաքուր+ա+մաքուր), ցրտացուրտ (<ցուրտ+ա+ցուրտ), սրասուր (<սուր+ա+սուր), քիաքուխ (<թուխ+ա+թուխ), սրբանուր (<նուր+ա+նուր), սրբասուր (<սուր+ա+սուր), կապտակապույտ (<կապույտ+ա+կապույտ) և այլն¹⁰։

Իսկ սրանք համեմատաբար ուշ ժամանակներում ստեղծված կազմություններ են, որոնք ցույց են տալիս, որ հոդակապով կրկնավորները սոսկ ժառանգություն չեն գրաբարից, այլ, իբրև բառակազմական եղանակ, գործում են նաև ժամանակակից հայերենում, և տվյալ դեպքում էլ իսկական բարդություններ են կազմվել հենց դրանց հատուկ հնչյունափոխությամբ։

Մանրորություն.— Դրաբարում միայն դեղադեղ կրկնավոր բարդությունն է, որ ուշ դարերում շեշտային հնչյունափոխության ենթարկվելով՝ երբեմն գործածվել է նաև դիզադեղ ձևով¹¹։

Հոդակապով կրկնավորները մյուս տեսակի կրկնավոր բարդություններից տարբերվում են նաև իմաստաբանորեն։ Կրկնակները նրանց մեջ, իբրև իսկական բարդության բաղադրիչներ, իմաստային ավելի սերտ կապով են կապվում իրար հետ և ավելի լայն ու ընդարձակ նշանակություն արտահայտում։ Իսկ դա նշանակում է, որ անգամ այն դեպքերում, երբ մի խումբ բառերի, ինչպես՝ մեծ, նոր, չար, ջերմ, գունդ, շեղ, դաս, դեմ, դառն, խոր, ծով, սև, կերպ, ծանր և այլն, կրկնությամբ կազմվում են նաև հարադրական ու կցական բարդություններ, ա հոդակապով բարդությունները անպայման դարձյալ ինչ-որ չափով տարբերվում են նրանցից։ Հմտ. մեծ-մեծ—մեծամեծ, դստր-դստր—դստնադստր, գունդ-գունդ—գունդ առ գունդ—գունդագունդ, խոր-խոր—խոր ու խոր||խորուխոր—խորախոր, ծով-ծով—ծով առ ծով—ծովածով, կապույտ-կապույտ—կապտակապույտ, մուր-մուր—մուր ու մուր—մութամուր, ջերմ-ջերմ—ջերմ ու ջերմ—ջերմաջերմ, սև ու սև—սև-սև—սևասև, շեղ-շեղ—շեղ առ շեղ—շեղաշեղ և այլն։

Դա, անշուշտ, շատ ավելի պարզ կարելի է տեսնել բացատրական բառարաններում, եթե այդտեղ նրանք ներկայացվեն իրենց բոլոր իմաստներով։ Բայց ցավով պետք է ասել, որ հայերենի բացատրական բառարաններում հարադրական և կցական կրկնավորները կամ չեն ներկայացվում, կամ ներկայացվում են որոշ իմաստներով, որոնք այդ դեպքում անգամ զանազանվում են հոդակապով կրկնավորների արտահայտած իմաստներից։ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում», օրինակ, մեծ-մեծ կրկնավոր հարադրությունը ներկայացվում է մեկ՝ «Մեծ, խոշոր։ Այս ի՞նչ մեծ-մեծ ձվաներ են...», իսկ մեծամեծ հոդակապով բարդությունը՝ չորս՝ «© 1. Մեծ-մեծ (...իբրև Մեծ ի հոգն.)։ 2. Նշանավոր, ականավոր։ Մեծամեծ գործեր կատարեց... © 3. Նշանավոր՝ ականավոր բան։ 4. Երևելի մարդիկ, ավագանի, իշխաններ, առաջավորները։ Նա մեծամեծներին ընթրիքի հրավիրեց» իմաստներով¹²։

Ջերմ-ջերմ և ջերմ ու ջերմ («Իսկ առայժմ ջերմ ու ջերմ համբուրում եմ ամենքիդ», Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 318) հարադրությունները բացակայում են այնտեղ, իսկ ջերմաջերմ հոդակապով կրկնավոր բարդությունը ներկայացվում է յոթ՝ «ած. 1. Շատ տաք։ Ջերմաջերմ բաղնիք... © 2. Շատ այրող, կսկծեցնող։ 3. Շատ եռանդուն, ջերմեռանդ։ ...Ջերմաջերմ բարևներ։ 4. մկ. Տաք-տաք, շատ տաք դրությամբ։ Ջերմաջերմ լողանալ։ 5. Մեծ եռանդով, ջերմեռանդությամբ։ Ջերմաջերմ պաղատել՝ համբու-

¹⁰ Հասկանալի է, որ հնչյունափոխության են ենթարկվում հոդակապով այն կրկնավոր բարդությունները, որոնց առաջին բաղադրիչը հնչյունափոխվող հայնավոր կամ երկհնչյուն է ունենում։

¹¹ Տե՛ս այդ մասին Առձեռն բառարան հայկազնեան լեզուի. Վենետիկ, 1865, էջ 245։

¹² Ստ. Մալխասյանց. Հայերեն բացատրական բառարան. հ. 3, Երևան, 1945, էջ 290, 292։

րել: Ծ 6. Ստիպամամբ, փութով: Ծ 7. Սաստկաբար, խստությամբ» իմաստ-
ներով¹³:

Ձկամենալով շարունակել բաղդատումները, պետք է ասել, որ այդպես իմաստներով ավել կամ նվազ չափով իրարից զանազանվում-տարբերվում են խոր-խոր, խոր ու խոր||խորուխոր և խորախոր, ծանր-ծանր և ծանրածանր, նոր-նոր, նոր ու նոր||նորունոր, նոփ-նոր և նորանոր, ծով-ծով, ծով առ ծով և ծովածով, գունդ-գունդ, գունդ առ գունդ և գունդագունդ, շար ու շար («Ու դեռ խեղճն է բառաշում եղնիկի պես վիրավոր... Անիծելով մարդուն շար ու շար գործը վառողի», Հ. Շիրազ) և շարաշար... բարդությունները, որոնք իրենց հերթին ևս ցույց են տալիս, որ հոգակապով կրկնավորներն իրո՞ք ոչ թե համադրական կցական, այլ իսկական բարդություններ են:

Իբրև իսկական բարդության մի տեսակ, հոգակապով կրկնավորները, սակայն, առանձնապես շատ չեն և, ամբողջությամբ առած, մի հինգ տասնյակից չեն անցնում: Եվ, այնուամենայնիվ, նրանք ներկայացնում են մի որոշակի ենթահամակարգ իսկական բարդությունների ընդհանուր համակարգում, ունեն իրենց բնորոշ ձևաբանական ու իմաստաբանական կառուցվածքը, իրենց պատմական կյանքն ու կենսագրությունը և գալով հետավոր ժամանակներից՝ գործում են նաև ասյօր, զրսեորելով համապատասխան օրինաչափություններ:

Ինչպես հայ հին գրական լեզվի՝ գրաբարի փաստերն են ցույց տալիս, սկզբից ևեթ նրանք առաջ են եկել զուտ միավանկ բառերի կրկնությամբ, ինչպես՝ մեծամեծ («Մեծամեծ շարիս հասուցին ի վերայ զօրացն ձերոց», Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 164), գունդագունդ, դասադաս («Հեղեալ ի վերայ դասադաս գունդագունդ սրբոց մարգարէիցն», Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Տփղիս, 1909, էջ 170), գէշագէշ («Մանր մանր կոտորեալ զայս՝ թռչնոց երկնից գէշագէշ ջամբեցից. բ. մկ. ժէ. 33, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 550), դառնադառն («Դառնադառն մահունս և սաստիկ տանջանս. Ոսկ. յհ. ա. 9», ն. տ., էջ 596), դեռադեռ («Մօրուքն այնինչ դեռադեռ ծաղկեալք. Փիլ. տեսական», ն. տ. էջ 610), դէգադէգ («Դէգադէգ բազմութիւն ջուրցն. Ծ. Թ», ն. տ., էջ 611), ժիրաժիր («Ժիրաժիր մանկունս ընտրանաւ զայն ուսումն արուեստականացն տային. բ. մկ. դ. 12», ն. տ., էջ 835), կերպակերպ («...կերպակերպ նմանութեամբ գիւացն փախստական լինելով՝ անկանէին ի կողմանս Մարաց», Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 40), նորանոր, շարաշար («Բազում նորանոր շարաշար ցաւս յայլոց մարմինս տանջանօք հասուցանէր. բ. մկ. թ. 6», Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 444), շեղաշեղ («Դարբերաց շեղաշեղջն լինել մեռելոցն. Լմբ. իմ», ն. տ., էջ 475), ջերմաջերմ («Արտասուս ջերմաջերմ յամենայն ժամ հեղոյր: Կլիմաք», ն. տ., էջ 673), տարմատարմ («և ճայից վաղագոյն տարմատարմ շրջելոյ», Եղնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, էջ 174) և այլն:

Միաժամանակ պարզ է, որ նախապես հոգակապով կրկնավորներն են կադմել նույնպես ոչ թե ամեն տեսակի, այլ միայն որոշ միավանկ բառեր՝ ածականներ (մեծ, ջերմ, շար, ժիր, դառն...) և գոյականներ (դէգ, դաս, գունդ, կերպ, տարմ...), արտահայտելով ածականի, երբեմն նաև մակբայի խոսքամասային նշանակություն:

Նկատելի է մի ալ իրողություն ևս. հոգակապով կրկնավոր բարդությունները գրաբարում հանդես են գալիս ոչ միայն անփոփոխ (ինչպես՝ գունդագունդ, դէգադէգ, ժիրաժիր...), այլև հնչյունափոխության ենթարկված ձևերով¹⁴:

Այսպես՝ հնչյունափոխությամբ են ավանդված աղջամուղջ||աղտամուղտ, աղխամաղխ («իբերի, ապրանքի կուտակում», «հակ հակ ապրանք»), առնամարհ(-ել), բարձրաբերձ, ժանտաժուտ, խաժամուժ, խաղնախուղն («կռճիկ»),

¹³ Նույն տեղում, հ. 4, էջ 138:

¹⁴ Խոսքը ալստեղ, հասկանալի է, ոչ թե շեշտի հետ կապված, այլ փոխազդեցական հնչյունափոխության է վերաբերում:

խառնամաղ, խաղտախուղտ («խաղտի կամ խալտի ժողովրդի լեզվով, կոշտ, կոպիտ»), հաստաբեստ («այսպէս յարձակէին որպէս լեռն մի բարձր և կամ որպէս դաշտարակ մի հաստաբեստ հօգոր և անշարժ», Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 169), հաստամեստ («տեսանէր սպարապետն Մանուէլն ի մեծութենէ հասակին... ի հաստամեստ յանձնէն», ն. տ., էջ 204) կրկնավոր բարդութիւնները, որոնցում և փոփոխվել է երկրորդ բաղադրիչը՝ ա) ձայնավորից առաջ ստանալով մ (աղշամաղշ, աղխամաղխ, արհամարհ). բ) սկզբնաբաղաձայնը փոխարինելով նույնպէս մ-ով (խառնամաղն, խաժամով). գ) կրելով միայն ձայնավորի կամ նաև ձայնավորի փոփոխություն (ժանտաժուտ, խաղտախուղտ, բարձրաբերձ, խաղնախուղն, աղջամուղջ, խաժամով):

Իսկ սրանք ընդհանրական հնչյունափոխություններ են, որոնք ցույց են տալիս, որ հոդակապով կրկնավորները հիմնականում ստեղծվել են ժողովրդագիտական կրկնավորների լեզվում և ընդհանուր առմամբ աչքի են ընկնում բաղադրիչների իրար նկատմամբ ունեցած տարաստիճան իմաստային կապերով ու հարաբերություններով:

Անհնչյունափոխ կրկնավոր բարդությունների բաղադրիչները իմաստային ու շարահյուսական համեմատաբար «թույլ» կապով են կապվում իրար հետ և գործածվում են մեծ մասամբ նաև հարադրության մեջ, ինչպես՝ գէշ գէշ («Գէշ գէշ պատահեցան. Դան. ժղ. 41», նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, էջ 550), գունդ գունդ («Գունդ գունդ լինէին. Յհ. կթ», ն. տ., էջ 581), դէզս դէզս («Բերեալ կուտեաց ի վերայ իմ դէզս դէզս նման լերանց. Մարաթ», ն. տ., էջ 611), կերպս կերպս («Ի նմանութիւնս կերպս կերպս ծերոյ և սկայի և այլոց ևս երևեցաւ նոցա. Եփր. բ. կոր. և եբր.», ն. տ., էջ 1091), նոր նոր («Նոր նոր պտուղ բերէ. Կոշ. ժե», ն. տ., հ. 2, էջ 442) և այլն:

Իսկ հնչյունափոխված կրկնավոր բարդություններն, ընդհանրապես, բաղադրիչների ավելի սերտ միություն են կազմում և չեն անդամատվում: Այլ կերպ կամ ավելի պարզ ասած՝ նման դեպքերում բարդության երկրորդ բաղադրիչը սովորաբար առանձին կամ ուրիշ բաղադրությունների մեջ չի գործածվում, որն էլ, ի դեպ, լավագույն ապացույց է այն բանի, որ հաստաբեստ իսկական բարդությունը ոչ թե հաստ և պարսկ. besta («կապալ, կապված») բառերից է սերում, այլ, ինչպէս Փաւստոս Բուզանդի գործածած հաստաբեստ և հաստամեստ ձևերն են ցույց տալիս, առաջ է եկել հաստ բառի կրկնությամբ՝ կրկնակի հնչյունափոխության («հաստամեստ > հաստամեստ > հաստաբեստ») հետևանքով:

Հնչյունափոխված կրկնավորների մեջ առանձնանում և թերևս բացառություն է կազմում բարձրաբերձ բառը, որի բարձ(ր) բաղադրիչն անկասաբար ձայնդարձի օրենքով դառնալով բերձ, հանդես է գալիս նաև այլ բաղադրությունների մեջ, ինչպէս՝ երկնաբերձ, լեռնաբերձ, լուսաբերձ և այլն¹⁵:

Օտնոթուրչում.— Կրկնավոր չեն կերակուր և գրագիր իսկական բարդությունները, որովհետև զրանցում բաղադրիչները ոչ թե կրկնվում ու միատեսակ, այլ տարբեր իմաստներ են արտահայտում (կերակուր-ը ոչ թե կեր և կեր, այլ ուտելու կուր՝ կեր, ուտելիք, գրագիր-ը ոչ թե գիր և գիր, այլ գիր գրող է նշանակում):

Գրաբարում նման պատկեր ու դրսևորումներ ունենալով, հոդակապով կրկնավորները, իհարկե, միշտ նույնը կամ անփոփոխ չեն մնացել, այլ ժամանակի ընթացքում դարգացել և մանավանդ աշխարհաբարում կամ արդի հայերենում համալրվել են նոր բարդություններով, ինչպէս՝ բազմաբազում, բարձրաբարձր, զորշագորշ, ժանտաժանտ, խորախոր, ծանրաժանր, ծովածով:

¹⁵ Այդ մասին տե՛ս Հ. ր. Աճառյան. Հայերեն արժատական բառարան. հ. 1, Երևան, 1926, էջ 978—979: Նույնի՝ լիակատար քերականություն հայոց լեզվի. հ. 3, Երևան, 1957, էջ 34, 37:

թխաթուխ, կապտակապույտ, հրաճուր, մաքրամաքուր, նրբանուրբ, սրասուր, սևասև, սրբասուրբ, ցրտացուրտ և այլն:

Բնագրային օրինակներ.—Բարձր են երկնի ձեղունքները, նազելի՜ս, Բայց իմ սերը բարձրաբարձր է նրանցից. հոր են երկրի հիմունքները, նազելի՜ս, Բայց իմ սերը խորախոր է նրանցից (Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 180): Բայց ուժը նրա, որ չէր կասում, ժողովուրդն էր իր բազմաբազում (Ն. Չարենց)¹⁶: Ահա՛ հայրենի տերեր դաժան՝ Ավելի զարհուր ու ծանտաժանտ (Ն. Չարենց, Ընտիր երկիր, Ե., 1955, էջ 244): Աշխարհի ծայրն ընկած մի գորշագորշ քաղաք (Ն. տ., էջ 219): Հորդում ես ահա որպես վարար Գետ մաքրամաքուր ու կենարար (Ն. տ., էջ 244): Զգեցած սևասև զգեստ, բզկտված վրշտերով հազար Անցնում ես հերկերով այն ամա... (Ն. Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր, Ե., 1983, էջ 115): Այն վաղվա ժամին ցրտացուրտ, Երբ... Տերեններն այս—անցյալից ջոկված Թռչելու են ճյուղերից իրենց լուրթ (Ն. տ., էջ 154): Ես մտքերս եմ սանրում՝ հառնիխուռն—խճուճ, ծանրածանր, ծալծալ իմ մտքերը (Պ. Սևակ, Երկերի ժողովածու, Ե., հ. 6, էջ 213): Նահապետը... երեխաների հետ նայում էր կապույտ, կապտակապույտ երկնքին (Հր. Քոչար): Հանկարծ նրանցից (աստղերից) մեկը սահեց երկնականամարով, իր ետևից թողնելով մի երկար հրաճուր հետք (Թարգմ.): Ականջիս կարկաչում է անկաշկանդ հայոց հին երգն ու ձիւրքը սրբասուրբ (Ս. Կապուտիկյան)¹⁷: Մենք զրահներով ծածկված, Տոլեռոյի սրասուր թրերով զինված նավից կիջենք... (Կ. Չարյան, Երկեր, Ե., 1985, էջ 550): Ոգու կշեռք էր, ներդաշնակություն—Հիմնական պարի սկզբնասկիզբ շեշտով Տոգորված շքեղ մի աստվածություն (Ն. տ.) և այլն:

Այս և նման օրինակները ցույց են տալիս, որ ա) ժամանակակից հայոց լեզվում հոդակապով իսկական բարդություններ են կազմվում նույնպես ավելի շատ որակական ածականների, քան գոյականների կրկնությամբ. բ) ժամանակակից հայերենում կրկնավոր բարդություններ են կազմվում ոչ միայն միավանկ (նուրբ, սուր, սև...), այլև երկվանկ (բազում, կապույտ, մաքուր...) բառերով, և նրանցում էլ ննարավոր դեպքերում առաջին բաղադրիչը շեշտային հնչյունափոխության է ենթարկվում. գ) ժամանակակից հայոց լեզվում նույն բառի կրկնությամբ գերազանցապես ստեղծվում են բանաստեղծական բառեր, որպիսիք և ժամանակին նախասիրել է մանավանդ բոցաշունչ բանաստեղծ-տրիբուն Ն. Չարենցը, թերևս առաջինն էլ հենց գործածելով հիշատակված բազմաբազում, գորշագորշ, մաքրամաքուր, սևասև, ցրտացուրտ բարդությունները:

Այսպիսով՝ գրաբարից եկող՝ ա հոդակապով կրկնավոր բարդությունները հարստացել են իրո՛ք նոր բառերով և դրանց հետ ամբողջություն կազմելով՝ հետաքրքրություն են ներկայացնում նաև այն տեսակետից, թե իրենց հերթին ինչ չափով են մասնակցում նոր բաղադրությունների կազմությանը կամ բաղադրյալ նոր ինչ բառեր են կազմում:

Փաստերը ցույց են տալիս, որ հոդակապով կրկնավոր բարդությունները, իրենց բնույթով ու իմաստով պայմանավորված, ածանցվելու և բարդվելու առանձնակի հատկություն չունեն, և նրանցից միայն մի քանիսն են, որ հիմք են ծառայում այլ բաղադրյալ բառերի կազմության համար, ինչպես, օրինակ՝ աղջամուղջ—աղջամուղջային||աղջամուղջային, աղջամուղջել, աղջամուղջոտ, աղջա-

¹⁶ Այդ օրինակը բերվում է ըստ ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի, հ. 1, էջ 257:

¹⁷ Վերջին երեք օրինակների համար նույնպես տե՛ս ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, էջ 55, 389 և հ. 4, էջ 342:

մրդջանխատ... արհամարհ—արհամարհել, արհամարհալից, արհամարհական, արհամարհանք, արհամարհում... խառնամաղ—խառնամաղել, խառնամաղելով, խառնամաղություն. ծանրածանր—ծանրածանրություն. մեծամեծ—մեծամեծար, մեծամեծարար:

Դժվար չէ նկատել, որ այլ բաղադրությունների կազմությանը մասնակցում են հողակապով այն կրկնավոր բարդությունները, որոնք ավելի լայն ու ընդհանուր նշանակություն են արտահայտում, կամ որոնց բաղադրիչները զգալապես մթազնել են իրենց բուն իմաստը բարդության մեջ: Այդ տեսակետից ուշագրավ են հատկապես երկու բառ. մեկը հայրս. Հառ «կերպ, տեսակ» ձևից սերող և առանձին գործածություն չունեցող զան բառի կրկնությամբ կազմված զանազան կրկնավոր բարդությունն է, որից էլ շուրջ քսան բաղադրյալ բառեր են կազմվել, ինչպես՝ զանազանել, զանազանություն, զանազանում, զանազանակերպ, զանազանածև, զանազանաբար, զանազանափալ...: Մյուսը հուր («կրակ») բառի կրկնությամբ առաջ եկած հրահուր (<հուր + ա + հուր) կրկնավոր բարդությունն է¹⁸, որից էլ հրահրուն, հրահրատ, հրահրում, հրահրիչ, հրահրվել, հրահրել բաղադրյալ բառերն են կազմվել:

Սրանց մեջ էլ առանձին հետաքրքրություն է ներկայացնում հատկապես հրահրել («1. Կրակի բամի տալով բորբոքեցնել, արծարծել...: 2. փոխ. Սիրտը տաքացնել, բորբոքել...: 3. Հնդհանրապես՝ արծարծել, գրգռել, ուշտալ...»)¹⁹ բայը այն տեսակետից, որ ծագումնաբանական որոշակի կապ է երևան հանում դեռևս շտուկաբանված հրել («մերծել, կամ քոի տալ, կամ ուլանս տալ», «մղել, քշել», «հարվածի միջոցով մեկին կամ մի բան իրանից հեռացնել, բոթել, մշտել»)²⁰ բայի նկատմամբ և ցույց տալիս, որ դա, ոո բացակայում է գրաբարում և առաջին անգամ հանդիպում է Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարություն» գրքում («Ջի բնություն հրէ շտուով, և վարէ ի ստամոքացն», ԼԳ, էջ 94)²¹, նույնպես առաջ է եկել հուր բառից (հուր + ել > հրել) ճիշտ այնպես, ինչպես, ասենք, ջուր բառից ջրել (<ջուր + ել) բայն է առաջ եկել:

Հրել և հրահրել բայերն այնպիսի իմաստներ են արտահայտում, որոնք թեև տարբերվում, բայց բոլորովին էլ սահմանազատված չեն իրարից և, ամշուշտ, խառնվում են հուրը՝ կրակը արծարծելու, հրով՝ կրակով մի բան տեղադարձելու, մի բան առաջ բերելու իմաստի վրա: Ըստ որում պետք է ասել, որ նրանք երկուսն էլ առաջ են եկել ժողովրդախոսակցական լեզվում²², և հենց այդտեղ էլ հրել բայը ավելի է հեռացել իր նախնական իմաստից և ստացել «մղելու», «բոթելու» կամ կոպիտ ձևով ասած «քոի տալու» նշանակություն: Ուշագրավ է և այն, որ հուր բառի կրկնությամբ դարձյալ ժողովրդախոսակցական լեզվում կամ ավելի ճիշտ առանձին բարբառներում կազմվել են հրահրել՝ հողակապով և հրհրել՝ անհողակապ բայերը, որոնք նույնպես տարբեր իմաստներ են արտահայտում. օրինակ՝ նույնիսկ ոմանք հրահրում էին

18 Հուր բառի կրկնությամբ կազմված կան նաև կցական բարդություններ ինչպես անհրնչյունափոխ, այնպես էլ հնչյունափոխված ձևերով, հմմտ. օրինակ, հուրհուրալ, հուրհուրան, հուրհուրատել, հուրհուրատվել, հուրհուրել և հուրհրել, հուրհրան, հուրհրատել, հուրհրատին տալ, հուրհրատում և ավել:

19 Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, էջ 144:

20 Նշանակությունների համար համապատասխանաբար տե՛ս Բառգիրք հայոց. Նրևան, 1975, էջ 191: Առձեռն բառարան հայկազենան լեզուի, էջ 512: Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, էջ 151:

21 Շնորհալույթյամբ պետք է նշեմ, որ այդ մասին մեզ տեղյակ են պահել բանասիրական գիտ. թեկնածուներ Հ. Ավետիսյանը և Լ. Ղազարյանը, որոնք միջին հայերենի բառարան են կազմում:

22 Տե՛ս Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. Դ, էջ 405—408, 436:

իրենց սաների հոգի կողմերը (Ա. Բակունց), Հրհրելով հեռանում են շշուշներով անմեկին (Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 276), Իրար հրհրելով տղեքը դուրս էնան կտուրը (Ն. տ., հ. 3, էջ 82) և այլն:

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ՝

ա) Հոդակապով կրկնապարները կրկնավոր բարդություն մի առանձին տեսակ են և քանակով քիչ լինելով հանդերձ իրենց հասապատասխան տեղն ունեն հայերենի կրկնավոր բարդությունների մեջ ընդհանրապես:

բ) Հոդակապով բարդությունները իմաստապես հարցով հարադրական ու կցական կրկնավոր բարդություններին, իրենց ձևաբանական ու իմաստաբանական կառուցվածքով, բաղադրիչների միմյանց նկատմամբ ունեցած կապերով ու հարաբերություններով, ինչպես նաև արտահայտած ընդհանուր իմաստներով տարբերվում են նրանցից:

գ) Հոդակապով կրկնավոր բարդությունները կազմվում են միավանկ և երկվանկ որոշ ածականների ու գոյականների կրկնությամբ, արտահայտելով ածականի, երբեմն նաև՝ մակբայի սաստկական նշանակություն:

դ) Հոդակապով կրկնավոր բարդությունները ձևով ու բովանդակությամբ իսկական համադրական բարդություններ են և իբրև այդպիսիք պետք է ներկայացվեն ինչպես ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի, այնպես էլ գիտական հետազոտությունների մեջ:

ПОВТОРЫ С СОЕДИНИТЕЛЬНЫМ ГЛАСНЫМ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Доктор филол. наук А. С. МАРҚАРЯН

Резюме

Повтор как способ образования слов имеет свои различные проявления в армянском языке. Повторением целого слова или корня в нем образуются многочисленные как аналитические, так и синтетические сложные слова.

Одним из типов синтетических повторов являются те сложные слова, компоненты которых связываются друг с другом с помощью соединительного гласного ш. В статье рассматриваются повторы данного типа, и на основе анализа соответствующего языкового материала обосновывается, что они не соединительные, а исключительно истинные повторные сложные слова в армянском языке.